

և ինչու իր ձեռքն էլ վերաբերած է,—այդ բոլորի մասին լազիկով յայտնեց, որ ոչինչ չը գիտէր։
Հասկանալով և իր կինը դատարանի կողմից առաջարկած հարցմունքներին միջոցին լազիկով յայտնեցին առհասարակ լազիկով վարքի մասին։
Լազիկով նրանց յայտնել է, որ կամենում է մշտնէլ Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտը, ուստի և եռամսհով սկսել է պարապել, բայց մի քանի ժամանակից յետոյ տիրութեամբ տան է որ ոչ մի տեղ իրան չեն ընդունել սեմինարիայից իրան տուած վկայականով, որտեղ վարքը վատ է նշանակուած։

Լազիկով Գորու գաւառի խորվաշտի գիւղի քահանայի որդի է, ազգով վրացի։ Եօթ տարեկան հասակում նա զրկուեցաւ մօրից և ապա հօրից։ Ուսանելու համար Լազիկով մտաւ Գորու սեմինարիան։

Քարճապագոյն հրամանի հիման վրա Յովսէփ Լազիկով եմթարկվեցաւ զինուորական դատարանին, մեղադրվելով հետեւեալով։ Լազիկով դիմել է ընկտօր Չուրեցկուին և խնդրել է որ իր վկայականին մէջ վարքի 4-ը փոխեն 5-ի, և իրան հետ տան Գորու սեմինարիայի վկայականը։ Բայց մեղքով ստանալով նա վճռել է սպանել Չուրեցկուին, ուստի և գնել է դաշույնը և մայիսի 24-ին գալով սեմինարիան և տեսնելով ընկտօր Չուրեցկուին հետ, կրկնել է իր խնդիրը և նորից մեղքով ստանալով դաշույնով հարուածել է մի քանի անգամ աւագ-քահանայ ընկտօր Չուրեցկուին, որ և մեռել է ստացած վէրքերից։

Զինուորական-նահանգական դատարանը լսելով Լազիկովի գործը, գտաւ նրան մեղաւոր ընկտօր Չուրեցկու սպանութեան մէջ, և դատաւարանց նրան, ինչպէս վերին էլ լիւթեցինք, 20 տարւայ տաժանակիւր աշխատանքի։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ մեղ գրում են, Վրուկաս Ալաւաշեան, տեղիս թատերասիրաց ընկերութեան հոգին, նրա միակ ոյժը, այժմ թողնում է իր պաշտօնը։ Պատճառը հիւանդութիւնն է։ Նա իր առողջութիւնը դռնեց թատրոնի գործին, ուր այն միջոցին երբ նա սկսեց առաջ տանել նրան, ոչ բնական կար, ոչ էլ ժողովուրդը Մէկին նա խնդրում, աղաչում էր բնական, միւսին յաճախել թատրոնը։ Այժմ նա թողնում է գործը, բայց իր բոլոր աշխատանքները համար չնորհա-կալութիւն ոչ ռից չը ստացաւ։

Մեղ գրում են ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ և հետեւեալը։ «Նրանք և խաչի վանքի պարտիզում կիւրեղ հայրը 600 հատ հարկաւորայ ծառեր ոչնչացրել է, որպէս զի խոնաւութիւն չը լինի պարտիզում։ Բայց գլխաւորն այն է, որ այդ ծառերը կտրելով ու ծախելով վանահայրերը նպատակ ունենին բարոյքել իրանց նիւթական վիճակը։»

Ընն ասաց, չան ինչն է քանդում հայի տունը... Արդեօք տուն էր ասում...

Մենք տեսանք որ քաղաքի ընակչութեան մէջ փոքրամասնութիւնը այս կերպով մրցում է մեծամասնութեան հետ, նորը հինի դէմ մի վտանգաւոր պատերազմ է հրատարակել։ Այդպէս չէ գիւղերում։ Այնտեղ կանայք նահապետական ստրուկներ են, ըստ մեծի մասին կոպիտ ու անտաշ ընաւարտութեամբ, կորովի և տոկուն կազմուածքով։ Գրանց վրա է ընկած տնային անտես-սովութեան ծանր մասը, նրանք աշխատում են նախանձելի եռանով, այդ դիմացկանութեամբ պատիւ են բերում իրանց սեռին։ Քաղաքացի կինը իր գիւղացի քրոջ հետ կազմուածքի կողման համեմատած մի օրային էակ է, բայց պարկեշտութեան կանոնները պահպանելով բոլորովին նման է նրան։ Ընդհանրապէս քաղաքացի և գիւղացի կնոջ մէջ մեծ զանազանութիւն չկը գտնուի, եթէ վերցնենք անգամ առաջինի քաղաքակրթւած դասը։ Քաղաքացի կարող է շնորհալի նկատ ու կաց իմանալ, կարող է աւելի քաղաքավարի լինել և աւելի հասկացողութեան ընդունակութիւն ունենալ, բայց կրթութեամբ, բայց ընդհանուր հասկացողութեամբ նոյնն է, ինչպէս և գիւղացին։ Օրինակի համար ցոյց տանք սնտիպապաշտութիւնները։ Ղարաբաղի կինը, որ դասի և պատկանի, բոլորովին պաշարված է սնտիպապաշտութիւններով։ Մանկութիւնից նա պիտի սովորէ կեանքի առօրեայ երկութիւններն վերաբերեալ այն-քան նախապաշարմունքներ, անքան աւելորդա-

կիւմ քաղաքից մեղ գրում են։ «Մայիս ամսի սկզբներում այստեղով անցան դէպի Պարսկաստան Ջալալեան եղբայրները, որոնք Վիեննայում սովորել են կաշեգործութիւն և դիտաւորութիւն ունեն կաշու գործարան բանալ Թէհրանում, պարսից կառավարութեան թուրքութեամբ։»

ՇՈՒՇՈՒ մեր թղթակիցը հետեւեալ նամակ է ուղարկել մեզ։ «Ներկայումս հասարակութեան ուշադրութիւնը դրաւել է տեղիս րէ աւելան դպրոցի տան հարցը։ Այժմեան տունը շատ անյարմարութիւններ ունի, հեռու լինելով քաղաքի պահութեան համար հարկաւոր պայմանները։ Հայ և թուրք հասարակութեան մէջ նկատելի է մրցում, դրանցից իւրաքանչիւրը ուզում է որ իր քաղաքամասնում լինի դպրոցը։ Հայերը ցոյց են տալիս մի տուն, որ քաղաքի լաւ տեղումն է, լայն փողոցի վրա, այն ինչ թուրքերը կամենում են որ դպրոցը տարվի քաղաքի արևելեան ծայրը, որին հասնելու համար հայոց թաղից առնաւորդ կէս ժամ է հարկաւոր և, որ գլխաւոր անյարմարութիւնն է պէտք է անցնել մի քանի սարսափելի փողոցներով։ Որովհետև դպրոցի աշակերտների ահագին մեծամասնութիւնը հայերից է, ուստի կարծում ենք որ աւելի սրանց յարմարութիւնը պիտի աչքի առաջ ունենայ դպրոցի վարչութիւնը, մասնաւոր որ թուրք թաղի մի քանի տեղերով անցնելով, ինչպէս հաստատուում է բազմաթիւ օրինակներով, այնքան էլ ապահով չէ և րեկանները համար։»

Յուշիսի 9-ից մեղ գրում են որ յունիսի 14-ին, չարաթ օր, ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ հայ թատերասիրաց խումբը պէտք է ներկայացնում տար Հոգեւոր ուսումնարանի դահլիճում յօդուտ մի չքաւոր ընտանիքի։ Պէտք է խաղային «Արշակ Երկրորդ» ողբերգութիւնը և «Կրթութիւն» փոքր վիւր։

Հայ մամուլի ընթերցողներին յայտնի պ. Գրիգոր Նիկողոսեանի մասին, որ այժմ Կ. Պոլսումն է գտնուում, հետեւեալ ենք իմանում Կ. Պոլսի թէ հայոց լրագրողներից և թէ թիւրքերայի մայրաքաղաքի «Phare du Bosphore» ֆրանսիական թերթից։ Այս ինչ ենք կարդում Կ. Պոլսի հայոց լրագրողներում։ «Մօսկվայի երևելի ուսուցչական տեսաբան և վաճառականը, նախաձեռնութեամբ «Բուսկի Կուրիեր» լրագրող արտոնատէր պ. Լանիսի, որ մեծահարուստ գործարանատէր է, ընկերութիւն մը կազմած են ուսուցչական ամեն տեսակ ապրանքներ թիւրքից մէջ ծաւալելու և ստուգելու համար։ Ընկերութիւնը ձեռնարկած է կազմելու մեծ գրամատչու մը, որոյ միջոցաւ ստուգման կենտրոն մը պիտի հաստատէ ի Կ. Պոլսի, որ հիւղեր պիտի ունենայ եւրօպական և ասիական գլխաւոր գաւառաց մէջ և կը պատրաստուի արդէն գնել երկու նաւեր, որը պիտի յատկացուին իւր ապրանքային փոխադրութեան ի Կ.

պաշտութիւններ, որոնց մի առ մի հաւաքելու և գրի առնելու համար տարիներ շարունակ աշխատանք է պէտք։ Այդ բոլոր նախապաշարմունքներին մի և նոյն աստիճան հաւատ են ընծայում բոլոր կանայք, և վերջին գտնելի գեղջկուհին եթէ մի շատ անգամ անհեթեթ խորհուրդ տայ քաղաքացի պատուելի տիկնայք, վերջինս իսկոյն կընդունի կատարեալ հաւատով և համողմունքով։

Տնային աշխատանքները վերաբերմամբ բոլոր դասակարգերի մէջ միանմանութիւն ենք գտնում։ Ինչ է անում տանը դարաքաղցի կինը։—Բացի տնտեսական մանր զբաղմունքից, այն է՝ երկիւղ պահելուց, աման լուանալուց, հաց թխելուց, կերակուր պատրաստելուց ան ինչ է նրա գործը։ Գարնանը նրա ամուսինը առնում է մի կամ երկու պոլը բուրդ, կինը լուանում է բուրդը, Նոյն նահապետի ժամանակակից գործընկերով գգում ու մանում է ամենաքելը մի ամուսնայ ընթացքով, յետոյ մի երկու շաբաթ էլ զանազան գոյներով ներկում է և ան պիւրկապէս պատրաստ է հաստ ու կոպիտ թելը, նա նստում է և մինչև միւս գաւառը գոլպա է անում։ Պէտք է խոստովանուի որ քաղաքացի կնոջ արած գոլպան յայտնի է իւր և ճաշակով գործուածք, թէ և—փակագծերի մէջ ասենք—այդ ճաշակը տեղական հասկացողութեան համեմատ պարունակվում է խայտառակ գոյներով առաւելութեան և այլանդակ նկարների մէջ, բայց և այդպէս, ինչ տեսակ օգուտ է տալիս գոլպա անելը, որի վրա քաղաքացի կինը մի

Պօլսի Առաքիւն այն կարեւոր ընկերութիւնը իւր ներկայացուցիչը կրկն էր ի Կ. Պօլսի պ. Ալեքսանդր Մարգարեով, որ մայրաքաղաքը գալէն մի քանի ամիս յետոյ մեռաւ։ Կիմանալք այժմ թէ յիշեալ ընկերութիւնը իւր ներկայացուցչի և ընդհանուր գործակատարի պաշտօնն առաջարկած է առ պ. Գրիգոր Նիկողոսեան, որ ընդունած է զայն։ Հետեւեալ պ. Նիկողոսեան հրաժարական մատուցած է ուսուցչական թղթատարութեան դեր-տնօրէնի պաշտօնէն, որ կը վարէ չուրջ երկու տարիէ հետէ, և կը պատրաստվի իւր նոր պաշտօնին ձեռնարկել։ Ֆրանսիական «Phare du Bosphore» լրագիրը նոյն լուրը իր է-ջերի մէջ հաղորդելով, աւելացնում է. «Ռուս ձեռնարկողները, իրանց գործակատարի մահից յետոյ, աւելի լաւ ձեռքը չէին կարող յանձնել իրանց գործը, քան թէ կապիտան Նիկողոսովին, որ Կ. Պօլսի ուսուցչ փոստի կառավարչի օգնական է, քանի որ այդ իրանց ընտրած գործակատարը օժտված է բոլոր այն յատկութիւններով և ընդունակութիւններով, որոնք արդէն լաւ գնահատված են թէ Ռուսաստանի և թէ թիւրքերայի հայերից։ Մօսկվայի կապիտալիստները դժուար թէ կարող էին գտնել աւելի ազնիւ և Արեւելք գործերի մէջ աւելի փորձված անձն։» Յայտնի է որ պ. Նիկողոսեան արդէն 5 տարի է որ ապրելով Կ. Պօլսում ծառայում էր այդ քաղաքի փոստային գրասենեակում և ուրեմն միջոց ունէր այդքան ժամանակաւիջոցում ուսումնասիրել Կ. Պոլսի այլ և այլ շրջանները, Կ. Պոլսի դրութիւնը ու առևտուրը։ «Պ. Նիկողոսեան, աւելացնում են Կ. Պոլսի հայ լրագիրները, Մօսկվայէն ստացած է իւր հաւատարմագրերն ի մասին առևտրական այն կարեւոր պաշտօնին որ յանձնված է նախ, և ներկայացուցած է զայն Ռուսիոյ հիւպատոսարանին։ Այդ հաւատարմագրերով պ. Նիկողոսեան լիազօր արտօնութիւն կը ստանայ ձեռնարկել ուսուցչական արտօնութեանց ծառայման ոչ միայն ի թիւրքիս, այլ և Բալկանեան թերակղզայն մէջ։»

Ստացանք ՐՕՍՏՈՎ քաղաքում տպված Ռաֆայէլ Պատկանեանի մասին պ. Գ. Չախուշեանի ուսուցչին բնօրինակ 200 օրինակ, որոնցից 150 օրինակ յանձնեցինք թիւթլիսի Վենետիկական գրաւաճառանոցին։ Ծախելու համար։ Նոյն բնօրինակը թիւթլիսեցի կարող են առնել և «Մշակի» խմբագրատանը։ Գինը 50 կօպէկ է։

Ներկայ թվականի սեպտեմբերից ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ բացվելու է մի տեխնիկային դպրոց, որի նպատակն է պատրաստել անձինք, փոստային-հեռագրական բաժնում տեխնիկային պաշտօններ վարելու համար։ Այդ դպրոցը կարող են մտնել միջնակարգ դպրոցներից աւարտողները մաթեմատիկայից և ֆիզիկայից փորձական քննութեան եմթարկվելով։ Գալոցի դասընթացը երեք տարւայ կը լինի։ Ուսման վարձ չէ վճարվում։ Ուսանողները կը ստանան իւրաքանչիւրը ամսա-

ամբողջ տարի է միջնացնում։ Միջին թիւով շաբաթը նա կարող է 2 զոյգ տղամարդի գուլպա անել, ուրեմն ամբողջ տարին հաշվելով և տոններն ու աշխատի օրերը, երբ նա ուրիշ բանով է զբաղված, կարող է պատրաստել 100 զոյգից ոչ աւելի։ Իւրաքանչիւր զոյգը արժէ 35—40 կօպէկ, ուրեմն ընդամենը աշխատում է տարին 35 կամ 40 ր. եթէ այս գումարից էլ հանենք բոլոր, ներկի և այլ նիւթերի գինը 10 բուրլի, կը ստանանք 25—30 բուրլի։ Գեու այս աշխատանքը շատ հազուադիստ պիտի համարուի, կարող ենք հաստատապէս ասել, որ ըստ մեծի մասին մի տարվայ ընթացքում այդքան փող է աշխատում ոչ թէ մի կին, այլ մի ընտանիքը։ Գիւղերում այս աշխատանքին պէտք է աւելացնել կապերտներ, գորգեր ու միւս այսպիսի իրեր գործելը, բայց նախ շատ քիչ են գործվում և երկրորդ, ինչպէս յայտնել էինք մեր մի յօդուածում («Մշակ» № 13, 1886) այդ գործուածները ոչինչ են թուրք կանանց գործուածների մօտ և շատ արժողութիւն չունեն։ Ինչ աւել կոպէի որ քաղաքի ամենապարտաւոր տներում այդքան էլ չեն աշխատում, մասնաւոր նոր կարգերը մտնելուց յետոյ։

Ունենալով աշխատանքի այսչափ կարողութիւն, կինը Ղարաբաղում զանազան դժբախտ պատահարների ժամանակ անկարող է լինում ինքն իրան պահել։ Ամուսնու երկարատեւ հիւանդութեան ժամանակ կամ մահից յետոյ չքաւոր կինը միանգամից ընկնում է անտանելի դրութեան մէջ, ոչինչ աշխատելու միջոց չունի. ուստի ստիպված

կան 25 բուրլի թռչակ։ Այն անձինք, որոնք գը-տնվելով հեռագրական ծառայութեան մէջ, կը կամենան մտնել այդ դպրոցը, կը շարունակեն ստանալ իրանց ուսձիկը։

Ինչպէս ընթերցողը տեսնում է «Մշակի» մէջ տպվող թիւթլիսի քաղաքային վարչութեան յայտարարութիւնից, Պետական Խորհրդի ներկայ թվականի փետրվարի 24-ի Բարձրագոյն հաստատված կարծիքի հիման վրա, քաղաքային վարչութեանը առաջարկված է կազմել թիւթլիսի ազգայնակութեան ընտանեկան ցուցակները։ Այժմ քաղաքային վարչութիւնը ձեռնարկել է արդէն, ուստիկանութեան աշակցութեամբ, այդ ցուցակների կազմելուն և ուստիկանները արդէն ման են գալիս տնից տուն և սկսեցին արդէն կազմել յիշեալ ընտանեկան ցուցակները։ Բացի թիւթլիսից, լուսն ենք որ և Անդրկովկասի ուրիշ քաղաքներում սկսվեցաւ արդէն նոյն ընտանեկան ցուցակագրութիւնը։

«КАВКАЗ» լրագիրը լսել է հաստատա աղբիւրներից որ Թաքաւոր Կայսրը բարեհաճել է կովկասեան կառավարչապետին իրաւունք տալ հաստատելու կովկասեան ուսումնարանական շըրջանի հոգաբարձութեան կողմից առաջարկելի ցուցակները, որոնք վերաբերում են միջնակարգ դպրոցներում գործածվող հայերէն և վրացիերէն գրերի քննութեան հարցին։

Այս տարի թիւթլիսի Ներսիսեան դպրոցում աւարտել են 17 հոգի, որոնք և կը ստանան վը-կայականներ։

ԿԱՐՍԻՑ մեղ գրում են հետեւեալը։ «Յունիսի 8-ին, կէսօրից յետոյ, մօտ 20 բօպէ տեղագրութեամբ ընկալի մեծութեամբ կարիւտ եկաւ Կարսում և նրա շրջականերում։ Անկախած կար-կուտը մեծ վնաս տուած կը լինի քաղաքի շրջա-կաններին, իսկ քաղաքի հիւսիսային կողմը նայող բոլոր պատահանների ապակիները կտաւարկա-պէս ջարդվեցան։»

Մեր թղթակիցը գրում է մեղ ԿԱՐՍԻՑ որ յու-նիսի 4-ին, կէս գիշերին, հրդեհ յայտնվեցաւ Կար-սի մի հրէայ դերձակ Կրէյմերի խանութիւն։ Հըր-դեհը աշողվեցաւ հանգչնել անմիջապէս։ Կար-սում են որ կրակը դիտմամբ էր դցած խանութի մէջ, դէպի խանութատէրը ունաց կողմից ունե-ցած թշնամութեան պատճառով։ Խանութի ետեի կողմից մի պատուհան էր բացած, և խանութի մէջ ֆօտօգէն էր անած։ Արդէն երկու անձինք, որոնք կանգնածվում են յանցանքում, կարանաւոր-ված են, սրանք են մի հրէայ փորագորդ և նրա ընկերը։ Առաջինը, ասում են, արդէն յայտնի է ամբողջ քաղաքում իր ուրիշ բազմաթիւ չարա-գործութիւններով։

է կամ մուրացիանութիւն անել, կամ ուրիշներ տնային գործերը կատարել։ Այս երկու արհեստ-ները մէջ մեծ զանազանութիւն չը կայ, լուացա-նարութիւնը, հացթուրութիւնը նոյնպիսի դա-ժան գրաւմունք է, ինչպէս և ողորմութիւն հա-ւաքելը։ Ամենաչին վարձ ստանալով ծա-նրը աշխատանքի համար, կինը շատ հեշտու-թեամբ կարգնում է իր առողջութիւնը, կարծում է իր կեանքը։ Նրա համար կայ ուրիշ ապրուստի աղբիւր, մետաքսի գործարանում թէլ քաշելը կամ բօժօժ ընտրել օրեկան տալիս է նրան 15—20 կօ-պէկ։ Սակայն Եւրօպայի գործարանները յայտնի է թէ ինչ սարսափելի բաներ են կանանց հա-մար, ուր մնաց մի տեղային գործարանը, որից տարածվում է ժողովրդի մէջ ամեն տեսակ հի-ւանդութիւն թրթախտից սկսած մինչև վնասեա-կան արտերը։ Այս թէ ինչու է այնքան մեծ զարաբաղի աղբաւ ու անտէր կանանց թիւը։ Յաճախ պատահում է տեսնել և մանկացած վա-ճառականի կնոջը, որ վերջին աղբաւից էլ տղու-մեկի դրութեան մէջ է, աշխատելու օյժ չունի փափկատուն տիկինը, աշխատանքը մինչև դժբաղ-դութեան օրը անհասկանալի բան է եղել նրա համար, բայց այսօր ինչպէս ուղում է առաջնորդ կերածների համը մէկ էլ տեսնել... Կինը աղբա-տուութեան առաջ բոլորովին ընկճված է մեռում, որովհետև նրա դէմ մրցելու կերպը անյայտ է նրան։

(Կը շարունակվի)

հաղորդում են լրագրողները, աշխատանքները դադարել են:

— Փարիզի կղերական թերթերը ուրախութեամբ են հաղորդում, որ Վատիկանի և Չինաստանի մէջ յարաբերութիւնները շատ բարեկամացած վիճակում են, ստացել և Հռոմի պապը կոնստանդնուպոլիսի ներկայացուցիչը չինաց կայսրութեան մէջ:

— Ազգանիստանից հաղորդում են լրագրողներին, որ էմիրը սաստիկ հիւանդ է: Արդարեւ խան-խանը իրան յաջորդ նշանակել է իր որդուն, Սար-վար-խանին:

— Յունիսի 11-ին Գլադստոն յայտնեց, որ թագուհին ընդունել է միջնորդութեան առաջարկութեանը պարզամտութեամբ լուծելու: Գլադստոն, հակառակ ընդունված սովորութեան, ոչինչ բացատրութիւններ չէ տալիս պարզամտութեան լուծման պատճառների մասին: Անգլիայից եկած տեղեկութիւններին նայելով Գլադստոն մեծ յոյս ունի ազգի համակրութեան վրա դէպի իր ծրագրերը: Բոլոր կուսակցութիւններն էլ եռանդով պիտի պայքարեն իրենց համար:

— Ֆրանսիայի Մարսել քաղաքում ծաղիկ հիւանդութիւնը վերջին ժամանակները այն աստիճան աստիճան էր տարածված, որ, ինչպէս երեւում է բժշկական գիւղացուհիներից, անցեալ 1885 թի յուլիս ամսից մինչև այսօր, ուրեմն մի ասուկայ ընթացքում Մարսելում ծաղիկ հիւանդութիւնից վախճանվեցան 868 հոգի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 17 յունիսի: Կ. Պօլսից հաղորդած այն լուրի մասին, որ ռուսաց զորքերի հաւատարմատարը Կ. Պօլսում իր կառավարութիւնից ծանուցագիր է տարցել Արեւելեան-Ռումէլիայի օրգանական կանոնադրութեան դէմ բողոքական իշխանի ձեռքով խախտելու մասին Բ. Գլադստոնի ուղարկութեան հրապարակ համար, «Journal de St. Petersburg» լրագիրը ասում է որ իրան յայտնի չէ, կէս արեւոյց այդ տեսակ ծանուցագիրը, բայց անուշախալ է որ իշխան Ալեքսանդր խախտեց ոչ թէ միայն իշխան օրգանական կանոնադրութեան, այլ և եւրոպական համաձայնութիւնը: Իշխանը գումարեց Սօֆիայում ներկայացուցիչների ժողովը և դրանով պարզ ապացուցեց որ վերաբերվում է դէպի Եւրոպա առանց որ և է յարգանքի, մի և նոյն ժամանակ ձեռնամուխ է լինում թուրքիայի իրաւունքներին, մինչդեռ այդ վերջինը, կարծես, ներողամիտ աչքով է նայում ամեն բանի վրա, մի երողութիւն որ արդարացնում է շատերի կասկածը թէ իշխանը զորքում է Բ. Գլադստոնի համաձայնութեամբ: Արդեօք զոյգութիւն ունի այդ տեսակ համաձայնութիւն թէ ոչ, յայտնի չէ, բայց այնու ամենայնիւ Կ. Պօլսում զորք գրած ձեռքը չեն կարող մնալ առանց հետևանքի: Իսկ ինչ որ Ռուսաստանին է վերաբերվում, այն ամենից յետոյ որ նա արել է, նա ի հարկէ միմիայն իր վրա ընդունել չէ կարող կոնֆլիկտներաների որոշումների պաշտպանի դերը, մանաւանդ որ ինչպէս երևում է, այդ որոշումները արդէն կորցրել են իրանց արժէքը նրանց աչքում, որոնց օգտին նրանք ընդունվեցան: Հարցը դրանումն է որ որոշումները բացառականապէս խախտվում են Սօֆիայում, իսկ այդ մասին չեն ներգանում Կ. Պօլսի մէջ: Այդ տեսակ դրութեան մէջ անկարելի է ծանր վտանգների առաջն առնել:

ՐԵՎԷԼ, 17 յունիսի: Այստեղ այրվեցաւ 29 իր-գէլի ցերկը, երեք հոգի այրվեցան, իսկ ձիերին կարողացան փրկել:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 17 յունիսի: Հրատարակվեցան մաքսային տարիքի փոփոխութիւնները: Ներս և կող ապրանքներից, ինչպէս նաև կաշուի, բացի կարասիների փափուկ կաշուից, չորացրած և ցամաքացրածներից պղծին կը վերցնվի 50 կոպէկ, մետաղական թաց աղածներից—25 կոպէ: Կրակից չը փչացող աղիւններից, տանիքի կղմնորից, կաշուի պլիտաններից, դրէնաժի և ջրանցքի խողովակներից, բացի մետաղականից, 3 կոպէ, հասարակ աղիւնից—1 կոպէ, բերեղային պաղլեղից, ամեն տեսակը—25 կոպէ, չորացրած պաղլեղից ծծմբաթթւի կաշի—30 կոպէ, ածխաթթւային նատրից, կալքաթրից, պերլայից—40 կոպէ, նատրից և կալիւնից—60 կոպէ, ընտիր ծծմբաթթւի վատից, հասարակ ծծմբաթթւի վատից և ծծմբա-ած-

խաճիկից—22 կոպէ: Գործընթացող թթվաններից—60 կոպէ, արջապաններից—պրիմային, ցինկային և գալցեղեղեան—1 ռուբլի, ոսկրային, գեանախն-ձորի սափնիքից և չրեղից—1 ռ. 20 կոպէ: Արտահանվող ապրանքներից հում ոսկրեայ, կտորներով, մանրած, ծեծած, արորած, այրած, բացի փոշիացրածից կամ ծծմբաթթվառով մշակվածից և ոսկրեայ ածուխից—պղծից բոլորտո—10 կ. մետաղական: Այս փոփոխութիւնները կը գործադրվեն 1886 թի յուլիսի 1-ից: Պետական խորհուրդը կայացրեց. խաղողից և մրգից պատրաստվող սպիրտի վրա ահիցիլի բարձրացնելը Չեր-նոմբերեան չրջանի, Ստաւրոպոլեան նահանգի, թերթեան և Կուբանի գաւառների և Անդրկովկասի գործարարներին, յետագիւղ մինչև 1886 թի յուլիսի 1-ը: Մի և նոյն ժամանակ որոշված է, արտասահմանից դէպի Նիկոլայեւսկի և Վլադիվոստոկի նաւահանգիստները բերվող արաղից և սպիրտից 1886 թի յուլիսի 1-ից վերցնել մաքս իւրաքանչիւր մի վեզոյ անջարխառն սպիրտից, 10 ռուբլի թղթադրամով: Հաստատված կանոնները արաղի և սպիրտի ուժի վերաբերութեամբ, նրանց պահելու և վաճառելու ժամանակ, գործ են գրվում և խնամատնում: Արաղի կամ սպիրտի վաճառման միջոցին, գործարարատեղիները կամ պահեստատեղիները պէտք է գնդինքնին ցույց տան եւրոպական կամ վաճառման վկայականներ: Երեկ կայծակից հրդէհ առաջացաւ Կենեգի կտաւի գործարանում. վաճառ հասնում է մինչև 400 հազար ռուբլու:

ԿՐՕՆՇՏՍ, 17 յունիսի: Այսօր ժամը 1-ին կէսօրից յետոյ «Տէսարէլիս» եւստայի վրա, որին ուղեկցում է «Սլավիանկա» եւստայն, թագաւոր կայսրը և թագուհին կայսրուհին բարեհաճեցին ուղեորվել դէպի Ֆինլանդիայի կղզիներ: Այսօր հասան Օրէնբուրգ Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ Ամուսնու հետ և արդէն ուղեորվեցին Վինդավա:

ՍՕՖԻԱ, 17 յունիսի: Այն ուղերձի մէջ, որով բողոքական աղագային ժողովը պատասխանում է իշխանի ձեռնով, ուրախութեամբ է յայտնվում Բոլգարիայի երկու մասերի միանալու և ընդհանուր ժողովը դոմարելու առիթով, խօսվում է բողոքական զորքի և ժողովրդի կողմից ցույց տուած բազմաթիւ թիւերի մասին և անձնադրութիւնների մասին և յայտնվում որ պիտի գործադրվեն բոլոր միջոցները միութեամբ ամրապնդելու համար: Վերջում ասված է որ ժողովը կատարեալ հաւատ է ընծայում պետութեան մեծահոգութեանը, մանաւանդ մեծ Ռուսաստանին, որ Բոլգարիայի ազատուն ու բարեբար է եղած:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ			
Յունիսի 18-ին			
Ռուսաց 1 ռուբլ	1 ծոցմիւր վրա արժէ	231 ³ / ₃₂	պէն
— — — — —	Հաւորուգի վրա —	199 ³ / ₄	պփ.
— — — — —	Փարիզի վրա —	247	սան.
Ոսկի — — — — —	արժէ — — —	8 ռ. 42 կ.	
Մաքսային կուպոններ — — — — —	— — — — —	8 > 41 >	
Արծաթ — — — — —	— — — — —	1 > 26 >	
Բարսային դիսկոնտներ — — — — —	— — — — —	4 > 69 >	
Պետական քանկ. 50/0 տոմս 1-ին չրջելը	101 >	— կ.	
— — — — —	2-րդ — — —	100 > 50 >	
— — — — —	3-րդ — — —	100 > 37 >	
— — — — —	4-րդ — — —	100 > 25 >	
— — — — —	5-րդ — — —	100 > 62 >	
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին չրջ.	99 >	87 >	
— — — — —	2-րդ — — —	99 > 87 >	
— — — — —	3-րդ — — —	100 > 12 >	
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	242 >	25 >	
— — — — —	երկրորդ — — —	226 > 50 >	
51/2 0/0 ընտա — — — — —	— — — — —	104 > — >	
Ոսկեայ ընտա — — — — —	— — — — —	184 > 25 >	
Նոր կոմսօրիցած փոխառութիւն. — — — — —	— — — — —	157 > 37 >	
50/0 դրամական թղթեր կալուած. — — — — —	— — — — —	— — — — —	
— — — — —	փոխ. կրեդ. ընկ. — — — — —	161 > 25 >	
51/2 0/0 դրամական թղթեր. Խերսոնի — — — — —	— — — — —	97 > — >	
— — — — —	կալուած. բանկի. — — — — —	101 > 37 >	
60/0 դրամակ. թղթ. Խարկովի կալ. բան. — — — — —	— — — — —	101 > — >	
— — — — —	Պօլսական — — — — —	101 > 37 >	
— — — — —	Պետ. Տօլսկ. — — — — —	101 > 37 >	
— — — — —	Կիեւի — — — — —	100 > — >	
— — — — —	Մոսկովայի — — — — —	101 > 25 >	
— — — — —	Բեաւար. Տաւր. — — — — —	100 > — >	
— — — — —	Նիժ. Սամար. — — — — —	100 > — >	
— — — — —	Վիենայի — — — — —	100 > — >	
— — — — —	Թիֆլիսի — — — — —	27 > 43 > 97 >	
— — — — —	Փոթիկային — — — — —	18 > 43 > 97 >	
Վ. Օլոմպով-Կամսկի բանկի ահիցիլից 508 >	— — — — —	— — — — —	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. — — — — —	— — — — —	261 > 25 >	
Րիբնիկ-Վ. Օլոմպովի ընկ. — — — — —	— — — — —	83 > — >	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ. — — — — —	— — — — —	92 > 87 >	
— — — — —	— — — — —	95 > 62 >	
— — — — —	— — — — —	93 > 50 >	
— — — — —	— — — — —	99 > 50 >	
— — — — —	— — — — —	86 > 75 >	
— — — — —	— — — — —	— — — — —	

Իմրագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր
COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍՍԱՅԵՐԻ ՄԱՐՏԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Զորեքշաբթի 25-ին յունիսի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ. SINDH (ՍԻՆԴ) նաւապետ LAFFONT (ԼԱՓՕՆ) մանկով Կ. Պօլսի և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սէյդէ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ Կ. Պ. ԷԼԼԵՐՍ ԲՈՒՐ-ԿԼԱՐԻՒՆ և ԸՆԿ. Իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ԶԵՋՈՒԲԵԱՆ ԶԵՋՈՒԲԵԱՆՅԻՆ: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ տնի թեականի փետրվարի 24-ի ԲԱՐՉԱՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ կարծիքի հիման վրա, քաղաքային վարչութեանը առաջարկվում է կազմել Թիֆլիսի ազգաբնակչութեան ընտանեկան ցուցակները: Չեռնարկով ուստիկանութեան աջակցութեամբ, այդ ցուցակների կազմելուն, քաղաքային վարչութիւնը խոնարհաբար խնդրում է քաղաքի բնակիչներին, ա) ներկայացնել անձամբ ցուցակագրողներին ծննդական վկայականներ (մետրիկականներ) տարիքների համար, իսկ բնակարաններից բացակայ լինելու դէպքում, թողնել վկայականներ կամ գոցանից քաղաք տեղեկութիւնները տանը մնացողներից մէկի մօտ, բ) յետ ծննդական վկայականները գործնականում են պաշտօնական տեղերում, դպրոցական հաստատութիւններում, կամ ուրիշ հիմնարկութիւնների մէջ, այդ դէպքերում ներկայացնել ցուցակագրողներին այնպիսի տեղեկութիւններ, որոնք կարող են միանգամայն մասնաւոր լինել, գ) տանը մնացողները պէտք է ունենան գէթ մի կտոր թղթի վրա որ և է լեզուով գրած տեղեկութիւններ, ընտանիքի անդամների թիւի մասին, նոցա օրտեղ լինելու մասին, բացակայութեան դէպքում, առեւտրական վկայագրի մասին, որի հիման վրա իւրաքանչիւր ցուցակագրողը պարտւում է առեւտրով կամ արուեստով, այսինքն առաջին, երկրորդ գիւղիայի, կամ թէ մանրավաճառի վկայագրով, այլ և տեղեկութիւններ թէ ո՞ր դասակարգին է պատկանում ցուցակագրողը՝ ազնւական, հողեւորական, պատուաւոր քաղաքացիների, թէ մեշխանների դասակարգին: 2—3

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՔԵՏԵՐԻ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Զորեքշաբթի, յունիսի 25-ին, «ՄԻՆԳՐԵԼԻԱ» (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈԻՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլսի և Մարսէլը: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Կ. Գարանիօնին և Թիֆլիսում Կ. Րէնօին, նախկին Արծրունու գալիերում, № 103.

ԹՈՏԻՏԻՈՒԹԵԱՄ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էյէկաբ-Մելանգ. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափուկութեամբ: Կիր 2 ր. սրտակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոններին և պարահանդէսներին համար: Կիր 1 ր. 50 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պառնակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրթա Րիս.

Բաղաւոր—Eugénie. դափնեա և պսակի փոշիի ծաղիկներից, երեսին, չլինքին և ձեռքերին քնքշութեան և փափկութեան, նոյնպէս և մարմարեանի սպիտակութեան տալու համար, շուշանի և վարդի անուշա-

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՍՍԱՅԱՍՏ ՊՈՍՏԱՐ
Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախտ բերոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութեան և գեղեցկութեան: Կիր մի սրտակի համար 1 ռ. 60 կ.
Քինին-գլիցերինեան սպումը, պարտական բաղաւոր, մազերը անդաքնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ռ. սրտակի համար:
Չեռերի սպումը: Կիր սրտակի համար 1 ռ. 30 կ.: Իւրաքանչիւր սրտակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի հիւշտակ և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».
Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի վրձինով 1 ռ. 50 կ., առանց վրձինի 1 ռ. 20 կ.
Մազերի ներկը երեք գոյնի. սև, չափանկարդոյն և բաց-էջկ. Գ. արկղիկի 3 ռ. Ներկը «Րիս-Գուամանի» գործարարին:

Կիտաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիգորի և Կի զեղատան ապրանքների մազագի-նում, Վճիգոն հիւրանոցի տակ, Զուլալովի տանը: 46—100

Въ редакціи газеты «МШАКЪ» продаются слѣдующія брошюры:
1) «Экономическое Положеніе Турецкихъ Армянъ», публич. лекція Д—ра Григо-рія Арзруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.
2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція «Мшакъ», или Tiflis, Redaction «Mschak».